յիշ՛եցէք՛ ի տէր հանգուցելոյ :ԺԵ: (15) քահանայիւ. զՏէր Առաքել քահանայն յիշե-
ցէք ի տէր. թվ. :ՌՃԴ: (1655) էր: Ցաղաւթս յիշեցէք: Տէր Յիսուս Քրիստոս
Աստուած ողորմեա ննջեցելոցն:

*Հրատ. Բարխուդարեանց, 132։*

***495. ԽԱՉՔԱՐԻ բեկոր, ագուցված է եղել նույն եկեղեցու լուսամուտի մեջ. վրան՝***

թվ :ՋԷ: (1458) Ես ղոչ սարկաւագ Գոյարեցի (կանգնեցի°) խաչս Ազիզա,
մաւր իմ:

*Հրատ. Բարխուդարեանց, 132։ Լալայեան, Ազգ. Հանդ., II, 33։*

***496. ԽԱՉՔԱՐԻ բեկոր, ագուցված է ս. Ստեփաննոսի բեմի ճակատին, վրան եկեղեցու շինության թվականը.***

ԹՌՃ
Դ ԷՐ

Թ⌊ՎԻՆ⌋ :ՌՃԴ: էր (1655):

***497. ԽԱՉՔԱՐԻ բեկոր, ագուցված նախորդի կողքին.***

ԹՎ ՌՃ

ԹՎ⌊ԻՆ⌋ :ՌՃ: (1651):

***498. ԽԱՉՔԱՐԻ բեկոր, ագուցված է նույն եկեղեցու հյուսիսային ավան-դատան մուտքի ճակատին, վրան՝***

ԹԻՆ
ՌՃԿԱ

ԹԻ⌊Ի⌋Ն ՌՃԿԱ: (1712):

## 41. ԴՈՆԱՎԱՐԶ ԳՅՈՒՂ

***499. ԽԱՉՔԱՐԻ վրա, որը գտնվելիս է եղել գյուղի հյուսիսային կողմի բլրի վրա գտնվող*** Աղին նահատակ ***մատուռի արևելյան պատի տակ.***

Ես Սահակ կանգնեցի զխաչս:

*Հրատ. Բարխուդարեանց, 131։*

***500. ԽԱՉՔԱՐԻ վրա, Աղին նահատակի բակում՝***

Ես Աղամս Աստուծով սուրբ խաչս կանգնեցի:

*Հրատ. Բարխուդարեանց, 131։*

***501. ՈՐՄՆԱՓԱԿ խաչքար, գտնվելիս է եղել Աղին նահատակից քիչ վերև, երեք իրար կից խաչքարերից վեր՝***

Թվ՛ին՛ :ՇԻ: (1071). կամաւ ամենակալին Աստուծոյ ես . . . . Գրիգոր . . Աստուծոյ միաբան եղբարքս լա . . . զխաչս իշխանութեան . . . հայրա-
պետութեան . Ոհանէսի տէր Ներսէսի . . ո . . . աղաւթեցէք:

*Հրատ. Բարխուդարեանց, 131։*